514 Ո՞վ ունեմ երկնքի մեջ,

1. Ո՞վ ունեմ երկնքի մեջ,
Երկրի վրա Քեզնից բացի մեկը չկա:
Քեզ մոտենալն ինձ բարի եղավ,
Հոգուս հարազատ ընկեր գտա,
Հիսուս թանկագին:

Եվ երբ նայում եմ Գողգոթա տանող ճամփին,
Տեսնում եմ ոտնահետքերը Քո
Եվ սեր՝ գամված խաչի վրա,
Սեր, որ երբեք չի վերջանա:
Քո արյան ամեն կաթիլը խոսում է սեր,
Քո խոցված ձեռքերից, Հիսո՛ւս, բխում է սեր:

2. Այցելում ես լռության մեջ,
Սիրով բացում ես փակ դռներ, բժշկում ես:
Քո հայացքից սեր է կաթում,
Ու ես հալվում եմ մոմի պես,
Գրկումդ անէանում:

3. Քո հայրական ջերմ համբույրը
Ծշնջում է ամեն անգամ՝ Իմն ես, որդի՛ս:
Ափումս դնում ես սիրո կրակ,
Իսկ մյուս ձեռքումս՝ յուղի սրվակ,
Մեկանում ենք մենք:

...Ու ես խորհում եմ՝
Ով ունեմ երկնքի մեջ,
Երկրի վրա Քեզնից բացի մեկը չկա: